ՇՈՂԵՐ ՊՅՈՏՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

ՀՀ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՎՐԱ

Միգրացիայի ներքո կարել է հասկանալ մարդկանց տեղաշարժի գործընթացը սոցիալական տարածության մեջ, պայմանավորված աշխարհայացքային կողմնորոշմամբ, գաղափարական գոյատևման ձգտումով լուծել իրենց խնդիրները: Միգրացիան նպաստում է մոլորակով մեկ մարդկային ռեսուրսների տեղաբաշխմանը, ինչպես նաև կարևոր դեր է կատարում հասարակական բարիքների վերաբաշխման գործում: Ժամանակակից գլոբալ սոցիումում միգրացիոն շարժունակությունը դառնում է մարդկանց կենսակերպ: Միգրացիան կարող է կրել անկանխատեսելի բնույթ և առաջ բերել խոշոր, նույնիսկ գլոբալ սոցիալական խնդիրներ, որը պահանջում է տվյալ երևույթի կառավարման անհրաժեշտություն: Միգրացիան գործընթաց է կապված ինչպես ներքին, այնպես էլ արտաքին սահմանների հատման հետ մշտական բնակության վայրի փոփոխության ստեղծման նպատակով:

Համաձայն ՄԱԿ-ի «Հայաստանի Հանրապետության՝ միգրացիայի կառավարման ոլորտի ուսումնասիրություն և կարիքների գնահատում» զեկույցի վերջին տասը տարիների ընթացքում բնակչության առնվազն 35%-ը արտագաղթել է Հայաստանից, և, չնայած դրան, այն դեռևս լայնորեն տարածված է: Սա ճոճանակային միգրացիայի դասական օրինակ է: Նշենք, որ ճոճանակային միգրացիան բնակչության ամենօրյա տեղաշարժն է մի բնակավայրից, մեկ այլ բնակավայր աշխատանքի կամ ուսման նպատակով: Մի կողմից՝ հանրապետությունում տիրող տնտեսական վիճակը բնութագրվում է գործազրկության բարձր մակարդակով և ցածր աշխատավարձերով (2014 թվականին գործազրկության մակարդակը կազմել է 17.6%)[1]: Մյուս կողմից՝ բնակչության շարժունակության բնական խթանը, այն է՝ միգրացիան դեպի սոցիալ-տնտեսական զարգացման առավել բարձր մակարդակ ունեցող երկրներ, բազմապատկվում է հայ միգրանտների համար, ովքեր ունեն ամուր կապեր սփյուռքում, միգրացիայի փորձ և արտերկրում աշխատանքի ընդունման համար գործող ոչ պաշտոնական մեխանիզմներ[2]:

Համաձայն Միգրացիայի միջազգային կազմակերպության հաշվետվության միջազգային միգրանտների թիվը 2010թ. կազմել է 214 մլն մարդ կամ աշխարհի բնակչության 3.1%-ը, իսկ 2013թ. միգրանտների թվաքանակը աշխարհում կազմել է արդեն 232 մլն մարդ կամ երկրագնդի բնակչության 3.2%-ը: Եթե աճի այս ցուցանիշը պահպանվի նույն տեմպերով, ապա 2050թ. այն կկազմի 405 մլն մարդ: Աշխարհում ամենախոշոր միգրացիոն միջանցք են Մեքսիկա-ԱՄՆ 13 մլն արտագաղթվածներով: Նշենք, որ 2013թ. 232 մլն միջազգային միգրանտների մոտ 59%-ը բնակվել են զարգացած տարածաշրջաններում, այն դեպքում երբ զարգացող տարածաշրջաններում բնակվել են 41% միգրանտ: 1990-ականներից մինչև 2013թ. միջազգային միգրանտների թվաքանակը ամբողջ աշխարհում աճել է ավելի քան 77մլն. կամ 50%[3]: Միգրացիայի համատեքստում կարևորվում են նաև փախստականներին առնչվող հիմնահարցերը[4]: 2014թ. ՄԱԿ-ի տվյալներով գրանցվել է 59.5 մլն փախստական և անձնիք, ովքեր փնտրում են ապաստան: 59.5մլն փախստականից յուրաքանչյուր երրորդը կանայք են, յուրաքանչյուր երկրորդը մինչև 18 տարեկան երեխաներ: Այսօր ամեն չորրորդը սիրիացի է, յուրաքանչյուր 5-րդը՝ լիբանանցի, ամեն 20-րդը՝ գամբիացի, ամեն 60-րդը՝ ուկրաինացի և ամեն 122-րդը՝ մոլորակի բնակիչների փախստական է, ժամանակավոր բնակիչ կամ էլ անձ՝ ով փնտրում է ապաստան:

Միգրացիան հանդես է գալիս որպես հասարակության զարգացման գործոն կամ էլ ազդում է ժամանակակից հասարակության կյանքի գործունեության ոլորտների վրա՝ տնտեսական, քա-

---

[1] ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան, 2015թ., էջ 51:
[2] «Հայաստանի Հանրապետության՝ միգրացիայի կառավարման ոլորտի ուսումնասիրություն և կարիքների գնահատում», Երևան, 2014թ, էջ 15:
[3] International Migration Report 2013// www.un.org/en/development/population/migration
[4] http://www.rbc.ru/opinions/economics/13/07/2015/55a3627d9a79477496c4871b

ղաքական, սոցիալական, մշակութային։ Միգրացիան կատարում է կարևոր գործառույթ աշխատուժի տարածքային և տարբեր տարածքների միջև ինտելեկտուալ ներուժի տեղաբաշխման գործում։

Միգրացիայի հիմնական պատճառներից կարելի է առանձնացնել աշխատուժի պահանջարկի և առաջարկի տարբերությունը երկրների և շրջանների միջև, տարբեր երկրների և տարածքների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների, եկամուտների և աշխատավարձերի մակարդակների տարբերությունները, կառուցվածքային գործազրկությունը, միջազգային տնտեսական ինտեգրացիան։

Միգրացիոն գործընթացների և տնտեսական գլոբալիզացիայի հետևանքներից մեկը կարելի է համարել շատ երկրների համար արժեքավոր միջազգային աշխատաշուկայի ձևավորումը։ Կարելի է ասել, որ միգրացիան այսօր մարտահրավեր է նետում պետությանը՝ չլուծված խնդիրների սրացման և սոցիալական հակասությունների ճանապարհով։

Միգրացիոն տեղաշարժերից առավել դինամիկը և մասշտաբայինը այնուամենայնիվ մնում է տնտեսականը։ Բնակչության ժամանականից միգրացիայի հիմնական միտումները հանդիսանում են միջազգային միգրացիայի աշխարհագրական և մասշտաբային ընդլայնումները, այդ թվում պարտադրված միգրացիայի, բնակչության միջազգային միգրացիայի նշանակության մեծացումը աշխարհի դեմոգրաֆիական զարգացման գործում, միգրացիոն հոսքերի կառուցվածքի փոփոխությունը՝ աշխատաշուկայի գլոբալիզացման պահանջներին համապատասխան (բարձր որակավորում ունեցող միգրանտների թվաքանակի ավելացումը, ֆեմինիզացիա), անօրինական ներգաղթի անփոփոխ աճը[1]։

Տնտեսության կայուն զարգացման ապահովումը անհնար է առանց տարածքային և կառուցվածքային աշխատուժի առաջարկի և պահանջարկի հավասարակշռության պահպանման։ Այդ պլանում ազգային աշխատուժի շուկայի համար մեծ նշանակություն ունի արտաքին միգրացիան, որն ընդունակ է աշխատուժի արտահանման և ներմուծման հաշվին ապահովել տվյալ հավասարակշռությունը։ Ընդ որում հարց է առաջանում օտարերկրյա աշխատուժի երկիր ներգրավման օպտիմալ ծավալների որոշման։ Այս խնդրի լուծման համար առաջարկվում է կիրառել տարբերակված մոտեցում։

Երկրում օտարերկրյա աշխատուժի օրինական աշխատանքային գործունեությունից ստացված տնտեսական արդյունքը ներառում է հետևյալը.

ա) Օտարերկրյա աշխատուժի ներդրումը տնտեսության զարգացման մեջ ամբողջությամբ և ըստ տնտեսական գործունեության ձևերի։

Տվյալ ցուցանիշի հաշվարկման համար հաշվի է առնվում լրացուցիչ ՀՆԱ, որն ապահովում է արտադրության աճի հաշվին օտարերկրյա աշխատողների մասնակցությամբ, ինչպես նաև երկրում օտարերկրյա աշխատողների ներկայությունը ապահովող լրացուցիչ զբաղվածության խթանման հաշվին։ Օտարերկրյա աշխատողները, ներկայացնելով ապրանքների և ծառայությունների լրացուցիչ պահանջարկ, նպաստում են լրացուցիչ աշխատատեղերի ստեղծմանը, ինֆրակառուցվածքների զարգացմանը։ Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ամեն աշխատատեղ՝ միգրանտի կողմից ստեղծվող, բերում է լրացուցիչ աշխատատեղերի ստեղծման կից բնագավառներում կամ զբաղվածության ոլորտներում, ինչպես նաև ինֆրակառուցվածքների զարգացման։ Գործածության մեջ է դրվում այսպես կոչված զբաղվածության մուլտիպլիկատիվ էֆֆեկտը. արտադրության և ծառայության ոլորտում ներգրավվում են տեղի աշխատանքային ռեսուրսները, աճում են եկամուտները, մեծանում է գնողունակ պահանջարկը, որն իր հերթին խթանում է ներդրումները տնտեսության զարգացման մեջ։

բ) օտարերկրյա աշխատուժի մասնակցությունը բյուջեի եկամտային մասում՝ տարբեր հարկերի և վճարների մուտքերի աճի հաշվին,

գ) աշխատողների կրթության և մասնագիտական վերապատրաստման վրա ծասերի տնտեսումը օտարերկրյա մասնագետների ներգրավման հաշվին,

[1] Блинова М. С., Международные миграционные процессы, аналитический обзор, 2007., № 3–4, с.258–267.

դ) օտարերկրյա աշխատուժի մասնակցությունը բյուջեի ծախսային մասում պետական կամ համայնքային՝ բուժօգնության ծախսեր, ինֆրակառուցվածքի պահպանման ծախսեր՝ օտարերկրյա քաղաքացիների կողմից ստեղծված,

ե) եկամտային միջոցների ծավալը, որը գոյացել է աշխատանքային միգրանտների շնորհիվ եկամուտների տեսքով և նրանց կողմից երկրից արտահանվել։

Այդ թվում հարկ է նշել, որ միգրանտը արտերկրում վաստակած դրամական միջոցների մոտ կեսը թողնում է աշխատանք ապահովող երկրում՝ վճարելով սննդի, կեցության ծախսերը։

Նշենք, որ երկրում օտարերկրյա աշխատուժի աշխատանքային գործունեությունից ստացված տնտեսական արդյունքի հաշվարկման համար անհրաժեշտ է անել ոչ օրինական աշխատանքային միգրացիայի ճշգրտում, քանի որ այն հնարավոր տնտեսական արդյունքը կնվազեցնի հարկերի և այլ վճարների չվճարման հաշվին։ Երկրից՝ օտարերկրյա աշխատողների մեկնումն ապահովող ծախսերի հաշվարկման ժամանակ գնահատվում են ամբողջական բյուջետային ծախսերը, կապված աշխատանքային գործընթացի մասնակիցների միջև կնքված պայմանագրերի պայմանների պահմանման, ստուգումների անցկացման հետ, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիների արտաքսման ծախսերը, որոնք խախտել են աշխատանքային և միգրացիոն օրենսդրությունը։

Մեր հայացքով, աշխատուժի ծավալների արտահանման արդյունավետության գնահատականը և հեռանկարում ներքին աշխատանքային միգրացիայի ծավալների կանխատեսումը պետք է ներառի հետևյալը.

- հեռանկարում երկրի ժողովրդագրական զարգացումը ամբողջությամբ և նրա առանձին շրջանների, ներքին և արտաքին միգրացիոն տեղաշարժերի ծավալների կանխատեսումը՝ այդ թվում աշխատանքային,
- իրական և թաքնված գործազրկությունը, այդ թվում գործազուրկ քաղաքացիների թվաքանակի կանխատեսումը և հնարավոր ազատումը արդյունաբերության վերակառուցվածքային գործընթացի արագացման և աշխատանքի արտադրողականության մակարդակի բարձրացման դեպքում,
- աշխատուժում պահանջմունքի մեծացման հեռանկարը, այդ թվում նոր աշխատատեղերի ստեղծման հաշվին ազգային նպատակային ծրագրերի իրականացման, ներդրումային նախագծերի, սոցիալ-տնտեսական զարգացման պետական ծրագրերի շրջանակներում։

Աշխատանքային միգրացիան Հայաստանից միջազգային միգրացիոն արտահոսքերում բացարձակ մեծամասնություն է կազմում[1]։ Աշխատանքային միգրանտների 93%-ի համար նպատակակետ երկիրը ՌԴ-ն է։ Սա բացատրվում է նրանով, որ երկու երկրների միջև հատուկ վիզային ռեժիմներ չկան և դեպի ՌԴ ճանապարհածախսերը, ի տարբերություն այլ երկրների, համեմատաբար մատչելի են։ Մյուս կողմից էլ հայ միգրանտների համար ռուսերեն լեզվի իմացությունը Ռուսաստանը դարձնում է գրավիչ։ Այդ մասին են վկայում նաև վերջին 10 տարիներին մասնավոր տրանսֆերտների ճնշող մեծամասնությունը ՌԴ-ից Հայաստան։ Եթե 2005թ. դրանք կազմում էին 541մլն. դոլար, ապա 2013թ. դրանք աճել են գրեթե երեք անգամ, սակայն ռուբլու անկմամբ պայմանավորված դրանք 2015թ. կրկին նվազել կազմելով 915 մլն. դոլար (գծապատկեր 1)։

Դրա հետ մեկտեղ 2013թ. աճել է նաև ՌԴ-ից մասնավոր տրանսֆերտների մասնաբաժինը այլ երկրներից եկող մասնավոր տրանսֆերտների կառուցվածքում կազմելով 86%, սակայն 2015թ. կրկին նվազել՝ կազմելով 76% (գծապատկեր 2)։ Այդ նույն տարիներին մասնավոր բանկային տրանսֆերտների մուտքը Հայաստան կրճատվել է, ինչպես ԱՄՆ-ից եկող մասնբաժինը (11% -ից 2005թ., մինչև 10% 2015թ.), այնպես էլ այլ երկրների (17%-ից մինչև 14% 2015թ.)։

[1] http://www.e-cis.info/page.php?id=19705

Գծապատկեր 1.

Մասնավոր տրանսֆերտների մուտքը ՀՀ 2005-2015թթ. (մլն. ԱՄՆ դոլար)[1]



Գծապատկեր 2

ՀՀ մասնավոր տրանսֆերտների մուտքի կառուցվածքը 2005-2015թթ.[2]



Աշխատանքային միգրացիան Հայաստանից Ռուսաստան կարելի է դիտարկել որպես «աշխատուժի արտահանում», որն իր ողջ ծավալով ՀՀ համար հանդիսանում է արտահանվող «ապրանք» (չնայած այն վիճակագրորն որպես ապրանք արտահանվող ապրանքների ցանկում հաշվառված չէ), իր նշանակությամբ մեծացնելով ցանկացած այլ արտահանվող ապրանքային խումբը: Այսպես, 2012թ. աշխատուժի արտահանումը ՀՀ-ից ՌԴ կազմել է 1.440 մլն. դոլար, այն դեպքում, երբ երեք կարևոր արտահանվող ապրանքների խումբը կազմել է հանքանյութ՝ 279մլն. դոլար, ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքներ՝ 186 մլն. դոլար, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր՝ 173 մլն. դոլար, այսինքն համապատասխանաբար՝ 19%, 13% և 12% աշխատուժի

[1] www.cba.am/am/sitepages/statexternalsector.aspx
[2] www.cba.am/am/sitepages/statexternalsector.aspx

արտահանման մեծությունից, իսկ միասին վերցված միայն 44%-ը, այսինքն մոտ կեսը[1]: Համաձայն «Հայաստանում միգրացիայի վերաբերյալ տնային տնտեսությունների հետազոտության մասին» զեկույցի (Երևան, 2014) միգրանտ ունեցող տնային տնտեսություններից չորսից մեկը փոխանցում է ստացել իրենց միգրանտ գործընկերներից, որը համապատասխանում է ներքին միգրանտների գրեթե 25.5%-ին: Դրամական փոխանցումները, որոնք ստացվում են ՀՀ բնակչության մեկ քառորդի կողմից, շատ տնային տնտեսությունների համար սոցիալ-տնտեսական վիճակը բարելավելու միջոց է: Փոխանցումները անհամաչափ են բաշխված ՀՀ մարզերի միջև՝ Տավուշի մարզում տասը տնային տնտեսություններից չորսը արտերկրից փոխանցումներ է ստացել 40.7%, Երևանում՝ տասից միայն երկուսն է արտերկրից փոխանցումներ ստացել 19.6%, իսկ Արագածոտնում տնային տնտեսությունների միայն 16.7%-ն է փոխանցումներ ստացել արտերկրից[2]:

Գծապատկեր 3

Տնային տնտեսություններում արտերկրից ստացվող փոխանցումները ըստ մարզերի (%)



Դրամական փոխանցումները տնային տնտեսություններին օգնել են հիմնականում հոգալ իրենց առօրյա կենցաղային հոգսերը, սակայն պետք է քայլեր ձեռնարկվեն, որպեսզի փոխանցումների հոսքը որոշ չափով ուղղվի դեպի ներդրումներ և ոչ միայն սպառմանը: Փոխանցման ծառայությունների զարգացած շուկայի շնորհիվ հնարավար կլինի մատուցել էժան և որակով ծառայություններ (շնորհիվ փոխանցման գործարքների հետ կապված ծախսերի նվազման):

Ինքնին դրամական փոխանցումները չեն կարող վերացնել կառուցվածքային խնդիրները՝ տնտեսական աճի, սոցիալական վերափոխման և կառավարման համակարգի բարելավման ոլորտներում, որոնք բնորոշ են մարդկային ներուժի ցածր զարգացման մակարդակ ունեցող շատ երկրների: Ամեն դեպքում, միջազգային միգրացիան կարող է հիմք դնել ցանցերի ստեղծման, գիտելիքների տարածման աջակցման, նորամուծությունների և հայացքների համար, որոնք կարող են նպաստել զարգացմանը: Միգրացիայի հետևանքով ի հայտ եկած սոցիալական և մշակութային բնույթի փոփոխությունները կարող են լուրջ ազդեցություն ունենալ ձեռնարկատիրական գործունեության, համայնքային նորմերի և քաղաքական վերափոխումների վրա, իսկ այդպիսի գործընթացները մի քանի սերունդ հետո երբեմն հանգեցնում են լուրջ փոփոխությունների:

Ռուսաստանում գործազուրկների քանակն անցյալ տարի պաշտոնական տվյալներով 7,4 % գերազանցել է նախորդ տարվա մակարդակը: Ընդ որում, ռուսաստանցի շատ փորձագետների

[1] www.sojuzinfo.am

[2] «Հայաստանում միգրացիայի վերաբերյալ տնային տնտեսությունների հետազոտության մասին», Երևան, 2014, էջ 132:

կարծիքով, ընթացիկ տարում այդ ոլորտում դրական տեղաշարժեր չեն սպասվում: Միգրանտների վիճակն ավելի է վատացնում ռուբլու անկումը, որն իրեն զգացնել է տալիս, երբ ռուբլին վերածում են դոլարի կամ ԱՊՀ երկրների ազգային արժույթների: Հարկ է արձանագրել, այն փաստը, որ 2014թ. սոցիալական տրանսֆերտների ընդհանուր բաժինը 2013թ. համեմատ կրճատվել է մոտ 40%-ով[1]: Մյուս կողմից էլ, Ռուսաստանում ձգձգվող տնտեսական ճգնաժամը հանգեցրել է օտարների հանդեպ քաղաքականության խստացման: Օրինակ, կրճատվել են օտարերկրացիների թույլատրելի մասնաբաժինները տնտեսության տարբեր ոլորտներում աշխատակազմի թվաքանակում: Մեր քաղաքացիները, որոնց թիվը Ռուսաստանում գրեթե 0,5 մլն մարդ է, առավելապես զբաղված են շինարարության և առևտրի մեջ: Մինչդեռ անցյալ տարի շինարարության մեջ աշխատանքների ընդհանուր ծավալը, ըստ գնահատականի, կրճատվել է 15-20%, իսկ մանրածախ ապրանքաշրջանառության ֆիզիկական ծավալում անկումը հասել է 10%-ի[2]: Հնարավոր է, որ Ռուսաստանում մեր աշխատանքային ներգաղթյալները ստիպված կլինեն հայրենիք վերադառնալ: Պարզ է, որ մարդկանց տուն վերադարձը, բոլոր դրական հետևանքներով հանդերձ, տնտեսության համար բավականին ծանր հետևանքներ կունենա: Արդեն անցյալ տարի Ռուսաստանից տրանսֆերտների կրճատումը բացասաբար էր անդրադարձել բնակչության ֆինանսական եկամտի վրա, իսկ այդտեղից էլ՝ առևտրի և մի շարք ծառայությունների վիճակի:

Նշենք, որ ՌԴ-ում աշխատանքային միգրանտների համար 2010թ. ընդունվեց արտոնագրային (պատենտային) համակարգը, և միայն այն օտարերկրյա քաղաքացիների համար, ովքեր աշխատում են ֆիզիկական անձանց մոտ: Եթե 2011թ. արտոնագրեր ստացել էր 764.9 հազ. մարդ, իսկ 2014թ. աշխատանքային արտոնագրեր ձևակերպել են 2134 հազ. միգրանտի, որը 1.6 անգամ ավելի է, քան 2013թ. և 2.8 անգամ ավելի է, քան 2011թ.[3]: Հայերը, որոնք ՌԴ-ում աշխատանքային գործունեություն են իրականացրել ֆիզիկական անձանց մոտ 2014թ. ընթացքում և ստացել արտոնագրեր, նրանց թիվը կազմել է 149 հազ. մարդ կամ ՌԴ ժամանած աշխատանքային միգրանտների մոտ 7%-ը:

Հաշվարկվել է, որ բոլոր միգրանտների 94%-ը ժամանակավոր միգրանտ աշխատողներ են, մինչդեռ միայն 3%-ն է մեկնում երկրից արտերկրում մշտական բնակություն հաստատելու նպատակով, իսկ 2%-ը մեկնում է արտերկիր ուսման նպատակով: Հետազոտողները նշում են, որ աշխատանքային միգրանտների մեծամասնությունը ցանկություն չունի ինտեգրվելու նպատակակետ երկրում, այլ մտադիր է վերադառնալ Հայաստան և հետագայում սկսել նոր պարբերաշրջան[4]:

Կարող ենք ասել, որ ՀՀ միգրանտների միգրացիայի հիմնական պատճառը կրում է տնտեսական բնույթ: Այդ պատճառները հիմնականում հետևյալներն են՝ ՀՀ-ում աշխատատեղերի բացակայությունը, ՀՀ-ում ստացվող վարձատրության անբավարար չափը, որը թույլ չի տալիս հոգալ ընտանիքի կարիքները և ապագայի նկատմամբ անորոշությունը:

---

[1] http://www.armstat.am/file/doc/99493603.pdf
[2] http://news.am/arm/news/310934.html
[3] http://www.demoscope.ru/weekly/2015/0635/baromphp
[4] «Հայաստանի Հանրապետության՝ միգրացիայի կառավարման ոլորտի ուսումնասիրություն և կարիքների գնահատում», Երևան,2014թ., էջ 15-18:

ՀՀ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՎՐԱ

ՇՈՂԵՐ ՊԵՅՈՏՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

Համառոտագիր

Հոդվածում ներկայացվել են ինչպես ՀՀ-ի, այնպես էլ ամբողջ աշխարհի միգրացիոն տեղաշարժերի ներկայիս վիճակի վերաբերյալ տվյալներ, երկիր օտարերկրյա աշխատուժի ներգրավման հետ կապված խնդիրներ: Ցույց է տրվել, թե ինչից է կախված օրինական աշխատանքային գործունեությունից ստացված տնտեսական արդյունքը, ինչպես նաև բերվել են աշխատանքային միգրանտների արտոնագրային համակարգի տվյալներ, դրամական փոխանցումների բաշխվածությունը ըստ մարզերի: Կարևորվել է միգրացիայի սոցիալ-տնտեսական նշանակությունը, ինչպես նաև դրամական փոխանցումների դերը ՀՀ տնտեսության համար:

Բանալի բառեր. *միգրացիա, տրանսֆերտ, աշխատանքային միգրացիա, աշխատուժի արտահանում, գործազրկություն, աշխատուժի ներգրավում, ծախս, ինտեգրվել, օրենսդրություն, ապաստան:*

ВЛИЯНИЕ МИГРАЦИОННЫХ ПРОЦЕССОВ НА ДЕНЕЖНЫЕ ПЕРЕВОДЫ В РА

ШОГЕР ПЕТРОВНА ПОГОСЯН, *к.э.н.*
научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

В статье представлены данные о текущем состоянии миграционных перемещений как в РА, так и в мире, а также проблемы, связанные с привлечением в страну иностранной рабочей силы. Показано, от чего зависит экономический результат, полученный от легальной трудовой деятельности, а также приведены данные, касающиеся патентной системы, распределения денежных переводов трудовых мигрантов по регионам. Отмечено социально-экономическое значение миграции, а также роль денежных переводов для экономики РА.

Ключевые слова: *миграция, трансферты, трудовая миграция, экспорт рабочей силы, безработица, привлечение рабочей силы, затраты, интегрирование, законодательство, убежище.*

THE IMPACT OF MIGRATION PROCESSES IN THE REPUBLIC OF ARMENIA ON REMITTANCES

SHOGHER PYOTR POGHOSYAN, *Ph.D. in Economics*
Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

The article presents statistical data on the current state of migration movements both in the Republic of Armenia and globally, and issues on attracting foreign labor force. The author shows which factors determine the economic results received from the legal labor migration, and presents data on legal work permits of migrant workforce and distribution of remittances by marzes. The author stresses the socioeconomic importance of migration, and the role of remittance for the economy of the Republic of Armenia.

Keywords: *Migration, transfer, labor migration, export of labor force, unemployment, labor force attraction, cost, integrate, legislation, asylum.*